

Եղեալիս այս իջեալին նման ուրիշ իջեալի յիշատակութիւն կը պակսի, սակայն բաղմամբիւ են ուղեգիրներու վկայութիւնները, որոնց համաձայն ճամբորդութեան ժամանակ գորղ գործածած ըլլան, երեւի երկրին սովորութեան համեմատ:

1611ին Անգլիացի John Cartwright կը պատմէ որ իր ուղեկից John Mildenalի հետ Հալէպէն ճամբայ կ'ելլեն. ճամբան «թրքական գորղի մը վրայ կը գիշերեն խանի մը մէջ՝ ուր կարաւանը կանգ առած էր»⁽¹³⁸⁾: Tavernier կը վկայէ որ երկրին բնիկները, հայ, թուրք, քիւրտ, պարսիկ են. ճանապարհին հետերնին կը տանին իրենց գորղը, որուն վրայ գիշերը կը պառկին: 1820ին Հայաստանէն անցնող Անգլիացի Lieut. Thoma Johns Macdonald Kinneir 1815ին Նազկայ լըճին մօտ հրեաներու Միշի գիւղը կը գիշերեն: «Մեր գորղերը թարմ յարդի վրայ սփռեցինք», կը վկայէ⁽¹³⁹⁾: Lumsden կը վկայէ որ ճամբան իր բարեկամին եւ ծառային հետ «սփռեցինք մեր գորղերը եւ բլրակի մը վրայ երկու ժամ քնացանք»⁽¹⁴⁰⁾: 1833ին Rev. Justin Perkins Հայաստանէն անցնելուն եւ կրած նեղութիւններուն կարգին կը յիշէ փրաններու տակ գորղերու վրայ ճաշած ու պառկած ըլլալն»⁽¹⁴¹⁾: 1855ին Charles Duncan Տրապիզոնէն Կարին ճամբուն վրայ գիշերները կը հանգստանայ «փռելէ վերջ գորղերը՝ անոնց վրայ պառկելու համար»⁽¹⁴²⁾:

Մեր վանքերը որ երբեմն իբր օթեան ալ գործածուած են, իրենց խուցերուն մէջ գորղեր ունէին: 1884ին Շահէն Վանի Կառուց անապատն այցելելով կը պատմէ թէ զինքը առաջնորդող խուցի մը դուռը բանալով «մեզ ներս հրամցուց եւ ըսաւ. ահա ձեզ չգիտեմ ո՛ր վանահօր սենեակը: Հիւրընկալը մեզ չէր խարեր. գետնի վրայ տարածուած գորղէ փողոցները ցոյց կու տային որ այդ խուցին մէջ ժամանակաւ յիւսիս պաշտօնակա՞ն անձ մը բնակած էր»⁽¹⁴³⁾: 1890ին Մշոյ Ս. Կարապետի վանքը այցելող Ա. Տըվըլէ եւ Գ. Փիտոն կը վկայեն որ իրենց խուցին «բոլոր կահ կարասիքն էր հին գորղ եւ մեծ որմադարան մը խուցին մէկ կողմն»⁽¹⁴⁴⁾:

Գորղը գործածուած է արտակարգ պայմաններու մէջ ալ: Tavernier կը վկայէ որ Պարսկաստանի մէջ ցխոտ ճամբաներէ ուղտերը անվտանգ անցնելու համար գորղ կը գործածէին: «Նախ քան ճանապարհներուն սալաշատակուիլը, անոնք (կարաւանները) ստիպուած էին ուղտերուն անցնելիք ամենալարծուն ճամբաներուն վրայ գորղեր

(138) A Collection of Voyages and Travels. — Tho. Osborne, London, 1745, Vol. I, p. 715.

(139) Journey... — London, 1818, p. 383.

(140) A Journey from Merut in India to London. — London, 1822, p. 144.

(141) A Residence of eight years in Persia. — Andover, U.S.A., 1843.

(142) A Campaign with the Turks in Asia. — Vol. I, London, 1855, p. 35.

Իսկ այլուր կը վկայէ. «ձաշէն վերջ քնացանք սփռուած գորղերու վրայ, մեր վերարկունքով ծածկուած» (Անդ):

(143) Մասիս չարաթաթերթ, Կ. Պոլիս, 1884, էջ 250:

(144) Ուղեւորութիւն ի Փոքր-Ասիա: Վրեն., 1899, էջ 53: